

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

04.02.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ջաղինյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Հ.Հակոբյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյան -մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ. Խանզադյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքներում առկա ապօրինի աղբավայրերի և աղբանոցների մաքրման և դրանց վերացման ուղղությամբ ու մինչև ս/թ մարտի 23-ը ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Խաչատրյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին`

Հնարավորինս սեղմ ժամկետում կազմակերպել և գույքագրել մարզպետարանի ենթակայության ՍԱՏԳ-ներում առկա խնդիրները, պահանջները և ներկայացնել դրանց լուծման հնարավոր տարբերակները:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն վերջին երեք ամսվա ընթացքում իրականացված գործուղումների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի հանրակրթական դպրոցներում ջերմային ռեժիմի սահմանված նորմերի պահպանման նկատմամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

ա) Մարզի համայնքների ղեկավարներին առաջարկել սուբվենցիոն ծրագրերը ըստ սահմանված կարգի ներկայացնել մինչև ս/թ մարտի 15-ը:

բ) Կազմակերպել համայնքների սուբվենցիոն ծրագրերի նախնական քննարկումներ և դրանք իրականացնել համապատասխան ոլորտային ստորաբաժանումների հետ համատեղ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՑ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ